

**ՄԵՎ ՂԼԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Ըլում ա, չի ըլում՝ մի թքավոր. էդ թքավորին ունենում ա իրեք տղա: Էդ թքավորը մեռնում ա. մեռնելուց եղնը տղերանցը թքավորութին չեն տալի: Թքավորի քաղաքումը մի բազրկյան ա ըլում, էլլիկը մաալահաթ ա անում, էդ բազրկյանին բերում դնում են թքավոր: Էդ բազրկյանը մի նոքար ա ունենում, շատ հավատարիմ ա ըլում, անումը՝ Սև դուլ:

Էդ թքավորը տենում ա, որ հին թքավորի տղերքը խեղճ, մոլորած ման ին գալի՝ ձեռները ծոցներում դրած: Միտքն ա անում, թե սրանք քանի որ ըստի են, իմ թքավորութինը պըտի տենան, մտքի մեջ ընկնեն, լավն էն ա, որ սրանց իմ կշտիցը հեռացընեն մի իրեք օրվա ճամփա: Սև դլին կանչում ա, ասում. — Տար սրանց մի իրեք օրվա ճամփա հեռացրու:

Սև դուլը դամշին վեր ա ունում, իրան ձիուն վեր ա ըլում, դրանց աղաք ա անում տավարի պես ու սկսում ա վեր հատել, ոնց որ տավար ըլին: Թքավորը իրեք օրեն ճամփա ա ասել, դա մի ամսվա ճամփա եղ ա ածում: Մի ամիսը որ թմամում ա, թաքավորի մենձ տղեն եղ ա դառնում դանչանք անում, թե. — Սև դուլ ջա՛ն, արևիդ դուրբան, գլխիդ մատաղ ըլեմ, իմ էրեսը դու տրորես, թքավորը քի ասավ իրեք օրվա ճամփա քշե, մի ամսվա ճամփա քշեցիր, եղ դա՛ն:

Սև դուլը անկաջ չի ունում, էլ սկսում ա վեր հատելով քշիլ: Երկու ամիսը թմամում ա, միջնեկ տղեն ա եղ դառնում, առաջվա պես դանչանք անում, թե. — Թքավորը ասել ա իրեր օրեն ճամփա քշե, դու էրկու ամսվա ճամփա քշեցիր, հերի՛ք ա, եղ դա՛ն:

Սև դուլը անկաջ չի ունում, էլ ա քշում: Իրեք ամիսը թմամում ա:

Թքավորի պուճուր տղեն սկսում ա հուջաթ անիլը:

— Տո՛ շան որդի, — ասում ա, — թքավորը քե ասավ՝ իրեք օրեն ճամփա քշե, դու մի ամսեն ճամփա քշեցիր, մենձ ախպերս միննաթ արավ, անկաջ չի կալար, էլ քշեցիր, էրկու ամիսը թըմամեց, միջնեկ ախպերս միննաթ արավ՝ էլ անկաջ չի արիր, էս ա իրեք ամիսն ա, հըմի էս հուջաթ եմ կաղնել, միտքս դրել եմ, որ քու արինը խմեմ. թե էդ քու արած դասը ինձանում մնաց, իմ հերն էլ անիծած, մերն էլ:

Դա որ ասավ՝ Սև դուլը եղ դառավ:

Թող Սև դուլը գնա իրա ճամփեն, թքավորի տղեքն էլ գնան մի քաղաք, սկսեն ըտեղ աշխատանք անել: Դրանց բանը էնքան յաջող ա, որ շատ աշխատեն, էն էրկուսը ուզենան կնիկ առնեն, ընդի մնան, պուճուր ախպերը դապուլ չի անի, ընդուր հմա, որ Սև դլի դասը մտին ա:

Ասում ա. — Օրթում եմ կերել, թե վեճ չի անցկենա:

Թե մի տարի կմնան, թե շատ տարի կմնան, եղ գնում են իրանց երկիրը: Գնացին իրանց երկիրը, տեհան իրանց ամարաթը խարապ ա էլել, դռները փակած են, փառը կոխել ա: Բաց արին դռները ու լավ, թամուզ ավլեցին, կրակ վառեցին, էդ քշերը քնեցին ըդեղ:

Ռավոտը հազար մանեթ տվին մենձ ախպորը, թե. «Գնա քաղաքը ման արի, ինչ որ խելքդ կկտրի, ա՛ն»: Գնաց քաղաքը ման էկավ ընչվել ճաշ: Ճաշին մի ջադուքար պառավ ռաստ էկավ, ասավ. — Ա՛յ տղա, արի ըստեղ, — ասավ:

Թե. — Ի՞նչ էս ասում, դեղի:

Թե. — Ըստեղ մի ախչիկ կա, մի հետ էրեսին մտիկ անողը հազար մանեթ ա տալի, արի դու էլ մտիկ տու:

Դա ուզեց որ գնա, պառավը թողաց ոչ:

Թե. — Խի՞ չես թողում:

Թե. — Ըստեղ մի ախչիկ կա, մի հետ էրեսին մտիկ անողը հազար մանեթ ա տալի, արի դու էլ մտիկ տու:

Դա ուզեց որ գնա, պառավը թողաց ոչ:

Թե. — Խի՞ չես թողում:

— Ծերքին հազար մանեթը տո՛ւ, եղև:

Տղեն հազար մանեթը տվուց, դուռը բաց արավ. տղեն ախշկանը որ տեհավ՝ խելքը գլխիցն ընկավ, նղավեց: Քացի տվին չարդախիցը դվեր գձեցին: Մնաց մինչի բիգուն. բիգունը զարթնեց, իրան թափ արավ, տեհավ գլխովը ինչ ա անց կացել, ու գնաց իրա ախպորտանց կուշտը:

Ախպերտինքը հարցրին.— Քաղաքումը ի՞նչ առար:

Ասավ.— Քաղաքը էլի էն քաղաքն ա, միջի աղքատը շատ ա, զադ չեմ առել, հազար մանեթը աղքատներին եմ փայ արել:

Ախպերտինքը ասին.— Բան չկա՛, լավ ես արել:

Էքսի օրը միջնեկ ախպորը տվին հազար մանեթ, ճամփեցին քաղաք:

Առաջի գնացած ախպոր պես էլ էն պառավը ռաստ էկավ:

Ասավ.— Այ տղա, ըստի մի ախշիկ կա, որ ըրեսին մտիկ անողը հազար մանեթ կտա:

Ասում ա.— Ո՛ւր ա, դեղի՛, տենամ:

Ասում ա.— Հազար մանեթը տո՛ւ, եղնա տես:

Տղեն հազար մանեթը տալիս ա, պառավը դուռը բաց ա անում, տղեն տենում ա ախշկանը, նղավում ա: Բոթում են չարդախիցը դվեր գձում: Ընչկել բիգուն մնում ա, ըրիգունը վեր ա կենում նղաված տեղից, գնում ա իրան ախպորտանց կուշտը:

Ախպերտինքը հարցնում են.— Ի՞նչ կերել ես՝ քի հալալ, ի՞նչ տեհել ես՝ մեզ ասա:

Ասում ա.— Ո՛նչ զադ եմ կերել, ո՛նչ էլ տեհածս ասեմ: Քաղութն էլ էն քաղաքն ա, միջի աղքատը շատ ա, հազար մանեթը աղքատներին փայ եմ արել:

Ախպերտինքն ասում են.— Լավ ես արել:

Մենձ ախպերն իմանում ա, որ իրան ցավիցը նրան էլ ա դիքե:

Վրա իրեք օրը պուճուր ախպորն են հազար մանեթ տալի, ման ա գալի ընչկել ճաշը, ճաշին տենում ա մի պառավ էկավ, ասավ.— Ա՛յ լավ տղա ջան:

— Հը, — ասում ա, — դեղի, ի՞նչ ա:

Ասում ա.— Ըստի մի ախշիկ կա, որ էրեսին մտիկ անողը հազար մանեթ կտա:

— Ո՛ւր ա, տենանք, դեղի:

— Ծերքին հազար մանեթը տու, եղնա տենա:

Ոտը եղ ա տանում տղեն, պռավի թփանին քացի ա տալի, ըսօր ա գնացել պառավը, թե էգուց. նղավում ա պառավը: Դռանը քացի ա տալի, դուռը կրնկին պոկ ա գալի, նի ա մտնում, տենում մի սիրուն ախշիկ:

Թքավորի տղեն ասում ա.— Ա՛ղախպա, անզգա՛ն, ի՞նչ արիր էրկու հազար մանեթը, բի որ ես սհաթը ֆոքիդ առնում եմ:

— Բերում եմ, ախպեր ջա՛ն, ինձ ձեռ մի տալ:

Ասում ա ու էրկու հազար մանեթը բերում ա իրան տալի:

Ասում ա.— Ես քու ախպերը չեմ, քու ախպոր հերն էլ անիծած, քունն էլ:

Ախշիկն սկսում ա դանչանք անելը, թե՛ Սն ղըլի նշանածն եմ, թքավորը կիմանա, ինձ մենձ դազապ կանի, դուս ի՛լ, գնա:

Թքավորի տղեն ասում ա.— Ես դրան ման գէի, դուս չպըտեմ գնալ, հըչվել քու նշանին ինձ չտա:

Ախշիկը նշանին բերում ա տալի, ի՞նչ անի, ճարը կտրված ա: Նշանը ոսկի սինի ա, ոսկուց էլ որձակ, որ կանչում ա իրան-իրան: Թքավորն ա տված ըլում:

Թքավորի տղեն նշանն առնում ա, դուս գալի: Ընդուր էն էքսը՝ տանում ա էդ նշանը քաղաքի մեջը, դի ա տալի, «Օսկի՛ սինի եմ ծախում»: Ով իմանում ա, ասում ա. «Էդ թքավորի նշանն ա, որ Սև դըլի հմա ախչիկ ա ուզել»:

Դրա խաբարը գնում հասնում ա թքավորին: Թքավորը միտք ա անում, որ էդ ախչիկը վատ գործիքի տեր ա, որ նշանը տվել ա իրան սիրողին, ասում ա. — Դրանե՛ ձեռը քաշենք, ուրիշ ախչիկ ուզենք Սև դըլի հմա:

Թքավորի տղեն էդ գրիցը իմանում ա, որ դրանե՛ ձեռն ա քաշում, ուրիշ ախչիկ են ուզում ուզի: Ինքը թքավորի տղան շատ սիրուն ա ըլում, էդ վախտը դեռ էրեսը մազ էկած չի ըլում, ինքն իրեն հմա մի ձեռ շոր ա կտրիլ տալի, տղամարդի շորը հանում ա, ախչկա շորն ա հագնում ու դնում ա մի պըռավի կուշտ, ասում ա. — Դեղի՛, ինձ ախչկացու բռնի:

Պառավն ասում ա. — Որդի՛, շատ լավ ես ասում, հմա կարալ չեմ քեզ պահեմ:

— Դեղի՛, — ասում ա, — դու ինձ անկաջ կալ՝ ախչկացու բռնե, ես քեզ կհարստացնեմ:

— Որդի՛, — ասում ա, — ո՞նց պտես հարստացնես:

Ասում ա. — Էս էրկու օրս կգան ինձ թքավորի Սև դըլի հմա կուզեն, ծերքի գալովը տաս ոչ, ասա՝ ես թքավորի դըլին տալու ախչիկ չունեմ. վրա էրկուսը որ գան, ընդով տուր՝ հմա շատ փող առ, ընդով կհարստանաս:

Պառավն ախչկան անկաջ ա անում: Էրկու օր անց ա կենում, թքավորին իմանում ա, որ մի պառավ շատ սիրուն ախչիկ ունի, գալիս են տենում: Ախչիկն էնքան սիրուն ա ըլում, որ տենողնին ասում են. «Ո՛նչ ուտենք, ո՛նչ խմենք, սրա էրեսին մտիկ անենք»:

Գալիս են ասում պռավին. — Ախչիկդ թքավորը Սև դըլի հմա ուզում ա:

— Ե՛ս, — ասում ա, — մի քյասիք պառավ, թքավորի դըլին տալու հմա ախչիկ չունեմ:

Էքսը մին էլ են գալի: Խոստանում ա տալու, հմա նրանցե շատ փող ա առնում: Վրա իրեք օրը հրսանիք են անում, օխտն օր, օխտն քշեր ուտում են, խմում, ուրախանում: Օխտն օրը, որ թմամում ա, Սև դուլն ու նշանածը գնում են, որ իրար հետ քնեն: Նշանածը ասում ա. — Ձեր օթախնին չիմ ման ածա, եղնա կքնենք իրար հետ:

Սև դուլը ման ա ածում, մնում ա մի օթախ:

Թե. — Էդ օթախի դուռն էլ բաց արա:

Թե. — Էս օթախումը բան չկա:

Թե. — Որ բաց չանես, ես ինձ կսպանեմ:

Էդ օթախի դուռն էլ ա բաց անում Սև դուլը:

Մտիկ ա անում հարսը, տենում ա, որ ըտեղ մի մանգանա կա, մին էլ մի էրկաթե չանգ կա:

Հարցնում ա Սև դըլին, թե. — Էտոնք էս ի՞նչ են:

Սև դուլը ասում ա. — Մի մարդ մարդասպան ա ըլում, մի մարդ գող ա ըլում, բերում են, ձեռները էդ մանգանումը դնում ու էդ էրկաթե չանգալովը վեր են հատում, ըսպանում:

Ասում ա. — Հլե իմ ձեռները դնեմ միջին:

— Դե՛ դի, — ասում ա Սև դուլը:

Հարսը դնում ա միջումը, Սև դըլին ասում ա. — Պըտըտե՛:

Պտըտում ա, ձեռին հուփ ա տալի, ցավացընում ա:

— Վա՛յ, — ասում ա, — ձեռս ցավեց:

Բարձրացնում ա Սև դուլը, ձեռը հանում ա:

— Դե՛, — ասում ա, — հըմի դու դի քու ձեռը:

Սև դուլը դնում ա, դա մանգանեն օլորում ա, ընչկեղ օլորում ա, որ՝ Սև դըլի ձեռները դըմբըրում ա ու նղավում: Էրկաթե ճանկը վեր ա ունում էնքան ծեծում ա, որ ջանումը սաղ

տեղ չի մնում, ու ինքը թողում ա, վի կենում, գնում: Գնում ա շորերը փոխում, անցնում, գնում իրա տունը:

Ռավոտը գնում են Սև դլին ու հարսին դավուր ըլին, տենում են հարսը կորած ա, մարդն էլ նդաված ա, ջուր են վրա տալի, եղ բերում:

Թքավորը էլչի ա գձում, որ մի հեքիմ գտնի, Սև դլին սաղացնի:

Թքավորի տղեն հեքիմի ձևով գալիս ա, թե. — Ես հեքիմ եմ, կսաղացնեմ:

Գալիս ա էփեճա սղացնում:

Էղ բիգունը թքավորը էղ տեղը դարավուլ ա դընում, որ տենա, թե Սև դլի դուշմանն ով ա, բռնի: Թքավորի տղեն էղ բիգունը կնիկարմատի շոր ա մտնում, գլուխը սև շալ ա ածում, մի տիկ հին գինի ա վեր ունում, գալիս ա դարավլների աղաքովը անց կենալու. «Ով որ,— ասում ա,— իրա աստոծը կսիրի, էս գինուցը խմի, մարդս մեռել ա, ժամ եմ արել, էս մեկ, տիկ գինին էվելցել ա, նրա ուղուրին եմ առել, ուզում չեմ, որ մնա»:

Ղարավուլին ասում են. — Դեղի՛ ջան, բի՛, մենք կխմենք:

Դեղին տանում ա, դրանք խմում են ու քեփովանում են. քնում են, բան չեն հասկանում: Դա տուն ա մտնում Սև դլի ջանին ա չոքում, սկսում ա ծեծել:

Սև դուլն ասում ա. — Էրնեկ իմանամ, թե դու ո՞վ ես, որ էղ դայդին ինձ ծեծում ես ու քրքրում:

— Հին թքավորի պուճուր տղեն եմ,— ասում ա,— միտդ ա՛ որ իմ հերը մեռել էր, էղ քու թքավորը քեզ ասել էր, թե իրեք օրի ճամփա քշե էղ թքավորի տղորանցը, իրեք օրվա ճամփու տեղը իրեք ամիս քշեցիր: Ես էն թքավորի պուճուր տղեն եմ, էն դասսն ա, որ հանում եմ:

Ասում ա ու տալի սըպանում: Էտա էքսի ռավոտը թքավորը մարդ ա դարկում, որ դավուրն ըլին. գալիս տենում են, որ դարավուլին ամենքը իրանց տեղերը զարթուն կաղնած են, նի են մըտնում, տեսնում Սև դուլը սպանված:

Գալիս են խաբարը բերում թքավորին:

Թքավորն ասում ա. — Էս քաղաքը ինչ դդար մարդ կա, թող թոփ ըլի իմ ամարաթի աղաքը:

Թոփ են ըլում: Թքավորի տղեն չիմն ու եղներն ա կազնած ըլում:

Թքավորն ասում ա. — Սև դլի դուշմանը իմանամ, թե ով ա էս դդար խալխիցը:

Թքավորի տղեն խալխին ասում ա. — Ճամփա տվեք, էս գնամ թքավորի ջուղապը տամ:

Ճամփա են տալի, գնում ա թքավորի աղաքին կաղնում, ասում ա. — Ես եմ արել:

Թքավորն ասում ա. — Ի՞նչ դուշմանությունն ունեիր, որ ըտենց արիր:

Ասում ա. — Ես հին թքավորի պուճուր տղեն եմ. իմ հորի մեռնելուց եղը, որ դու էլար թքավոր, մենք իրեք ախպերս խեղճ ման գեինք, դու դրան հրաման արիր՝ իրեք օրեն ճամփա մեզ հեռացընի. գա իրեք օրեն ճամփեն իրեք ամսեն ճամփա քշեց մեզ: Մի ամսեն ճամփա, որ քշեց, մենձ ախպերս եղ դառավ դաչանք արավ՝ անկաջ չկալավ, վեր հատեց, քշեց: Էրկու ամսեն ճամփեն որ հատավ, միջնեկ ախպերս դանչանք արավ. էլ վեր հատեց, քշեց: Երեք ամիսը թմամեց, եղ դառավ, օրթում կերա, ասի. «Ես էլ ըլեմ անիծած, իմ հերն էլ», հըմի էղ դասսն ա, որ հանել եմ:

Թքավորը կանչում ա Ջոմարդի դասաբին, մի նշանավոր դմակ ա պահ տալի, ու ասում ա.

«Էքուց ռավոտն արևդիպոցին, թե կբերես իմ կուշտը՝ էս գիտեմ ու դու, թե որ թքավորի տղեն կգողանա կբերի՝ էլ էս գիտեմ ու դուն»:

Ասում ա ու խալխին ճամփա գձում: Մթնում ա, թքավորի տղեն գիտի ոչ Ջոմարդի դասաբի տան տեղը, ման ա գալի, գտնում ա: Կնիկարմատի շոր ա հագնում ու տուն մտնում: Դմակը ոսկե սինով դրած ա ըլում թոնրումը՝ տեղը վրան գցած, մարդ ու կնիկ վրեն քնած:

Թքավորի տղեն գնում ա էղ էրկսի արանքը մտնում, մարդին ասում ա. «Դենը քնե՛, տեղս նեղ ա»: Կնկան ասում ա. «Տեղս նեղ ա, դենը քնե՛»: Կնիկը հենց գիտի՝ մարդն ա, մարդն էլ հենց

գիտի՝ կնիկն ա, մխելի հեռանում են: Էդ տղեն դանակը հանում ա, դռակն ու թաղիքը կտրում ա, սինին հանում ա, դրքա աղբրի ճամփեն ըղու ըլում:

Համա էդ քշերը լիսնակ ա. դա թող տանի սինին: Ջոմարդի դասաբի ոտը էն կտրածովը դըվեր ա պրծնում, զարթնում ա տենում, որ դմակ չկա:

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— տարա՛վ էն շան որդին դմակը:

Կնիկը իրան խորը քնիցը բան չի հասկանում, Ջոմարդի դասաբը վեր ա կենում, մի շալ ա կապում գլուխը, մի փարչ վեր ունում ու վագում դրքա աղբուրը: Տենում ա թքավորի տղեն սինին ձեռին էն կոնիցը գալիս ա, ասում ա.— Աստված սիրող, էս փարչը լքցրեք, կարում չեմ, ձեռս ցավում ա:

Թքավորի տղեն ասում ա.— Դեղի՛, առ էս սինին բռնե, էս լքցրենեմ:

Առնում ա սինին: Թքավորի տղեն տանում ա, որ լքցնի փարչը, էդ ա մտիկ անում, տենում ա օքմին չկա: Փարչը վեր ա քցում կոտրում ու վագ տալի դրա Ջոմարդի դասաբի տունը կրճաղաք ճամփով: Ջոմարդի դասաբը դեռ տուն հասած չի ըլում: Տուն ա մտնում, նրա կնգա շալը գլուխն ա կոլոլում, դուս գալի:

Դասաբը գալիս ա, թքավորի տղեն ասում ա.— Ա՛յ տնաշեն, էն շան որդին ոչխարը դուս ա արել, կկորչի, մեր տունը կքանդվի, գնա՛, մի եդ արա:

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— սինին բռնի, էն շան որդին չգա տանի:

Դասաբը գնում ա, տենում ա, ոչխարը տեղն ա, գալիս ա էդ իր ա տունը, կնկանը ասում ա.— Սինին ի՞նչ արիր:

Թե. — Խո սարսաղվել չե՞ս: Ինձ սինի էս տվե՞լ:

Նա հըսկանում ա, որ թքավորի տղեն էր՝ տարավ, էլ կարում չի, որ եղնեն գնա:

Արևդիպոցի հետ թքավորի տղեն տանում ա սինին թքավորին փեշքաշ անում:

Թքավորը ճակատը պաչում ա.— Դու՛ իմ տղեն, էս՛ քու հերը:

Թքավորը չոր ա ըլում, տղա չի ունենում: Նրան շինում ա իրան հմա տղա, ինքը ըլում ա հեր: Էդ թողունք ըտի կենա:

Ջոմարդի դասաբը գալիս ա, թքավորին ասում ա, թքավորը նրան խալաթ ա բախշում ու ճամփա գցում, թե՛ գնա:

Էդ թքավորի տղի հմա ինքը ախչիկ ա ուզում, օխտն օր, օխտը քշեր հըրսանիք ա անում:

Հըրսանիքից եղը էլչի ա դրգում շենլիգի մեջը, որ ձենով դի տա, թե. «Թքավորը պռավել ա՛, հըմիկից դենը որդին ա թքավոր»:

Քիչ վախտից եղը թքավորը մեռնում ա: Հոգևորդին թաղել ա տալի իրեն թքավորական կարգովը, իրա ախպորտանցը գործի վրա ա դնում:

Չարն ընդի, բարին ըստի: Աստծանե իրեք խնձոր ընկավ. մին՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: